2288

Unikka

Ulipp Pdp245

84
U-86

1855

78

2011

N 8

20 APR 2006

ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՊՐԵԼԷՔԹ

ՍԷՐԲ ԲԺՇՇԿԱՅԻ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Ի ԳԱԼԼԻԱՐԷՆ ԲՆԱԳՐԷ

Տ. Յ. ՏԷՏԻԵԱՆ

ՋՄԻՒՌՆԻԱ,

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԻԵԱՆ.

50, Ռէլիպիէ Մ՛ապպէսի։

ՌՅԵ. — 1855։

113665-42

10258-57

ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆՔ

ՄԱԹԼԹԷԹԹ

ՍԷՐԲ ԲԺԻՇԿԷ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅԵՔԻՍ ԱՐԱՐՈՒԱԾՈՅ

ԱՆՁԻՆՔ

Սկանարէլ, Լուսկինդայի հայրը։
Լուսկինդա, Սկանարէլի աղջիկը։
Քլիդանցրոս, Լուսկինդայի սիրահարը։
Ամինդա, Սկանարէլի աղջիկ դրացին։
Լիւքրէս, Սկանարէլի եղբօր աղջիկը։
Լիզէթ, Լուսկինդայի աղջիկ ծառան։
Պ. Գուլիէլմոս, Գարդաւաճառ։
Պ. Յոգաս, Ոսկերիչ։

Պ. Թոմաս՝
Պ. Տէքօնանցրէս
Պ. Մաքրոթոն
Պ. Պաւէ
Պ. Ֆիլիբրեն
} Բժիշկներ։

Գրագիր մը։
Համքանները, Սկանարէլի ծառան։

Տեսարանը Փարիզի մէջ է։

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ։

Սկանարէլ, Ամինդա, Լիւքրէս, Պ. Գուլիէլմոս, Պ. Յոգաս։

Սկանարէլ. Ո՛հ, ի՜նչպէս զարմանալի է մարդուս կեանքը, ու ես ալ այն հին երևելի իմաստունին հետ կրնամ ըսել թէ՝ «Լաւ որ երկիր ունի՝ պատերազմ ունի, և թէ ձախորդութիւն մը իր հետը ուրիշ ձախորդութիւն կը բերէ։ Մինակ մէկ կին մը ունէի, ան ալ մեռաւ։

Պ. Գուլիէլմոս. Հապա քանի՞ կին պիտի ունենայիր։

Սկանարէլ. Սիրելի պարոն, ըսել կ՚ուզեմ թէ կինս մեռաւ։ Այս կորուստը ինծի մեծ ցաւ կը պատճառէ, և քանի որ միտքս կը բերեմ, չեմ կրնար լացս բռնել։ Իրաւ իր վարքէն խիստ գոհ չէի, և շատ անգամ մէջերնիս կռիւ կ՚ընէինք, բայց մահը վերջապէս

ամեն բան խաղաղցուց։ Անոր մահուանը համար կու լամ. թէ որ կենդանի ըլլար, դարձեալ կռիւ պիտի ընէինք։ Աստուծոյ ինծի տուած բոլոր զաւակներէն միայն աղջիկ մը մնաց, և իմ բոլոր սրբութիւնս այս աղջիկն է։ Ինչու որ այնպիսի տրտում մելամաղձութեան և անտանելի տխրութեան մէջ կը տեսնեմ զան, ուսկից աղատելու միջոց մը չկայ, և որուն պատճառը չեմ կրնար իմանալ. ասոր համար խելքս պիտի կորսնցնեմ, և կ՚ուզեմ որ ինծի աղէկ խորհուրդ մը տաք։ (Լէ-ֆրէսին.) Դուն՝ եղբօրս աղջիկն ես. (Էմիդոյին.) դուն՝ իմ դրացիս. (Պ. Գոռ-ֆէլմոին և Պ. Յովսէին.) և դուք՝ իմ կնքահարքս և բարեկամներս էք։ Ի՞նչ ընեմ, կ՚աղաչեմ, խորհուրդ տուէք ինծի։

Պ. Յովս. Ես անանկ կը կարծեմ որ ամենէն աւելի աղջիկները զուարճացընող բաներն են փառաւոր հագուստները և զարդարանքը. և թէ որ քու տեղդ ես ըլլայի, այսօրուընէ՝ ադամանդէ կամ սուտակէ և կամ զմրուխտէ գեղեցիկ զարդ մը շինել կու տայի անոր համար։

Պ. Գուշիհշմոս. Ես ալ, թէ որ քու տեղդ ըլլայի, ծաղիկներ կամ մարդիկներ նկարուած օթոց մը կ՚առնուի, և անոր սենեակը փռել կու տայի, որպէս զի անոր թէ միտքը և թէ նայուածքը զբաղցընէ։

Ամինդա. Ես անանկ կը կարծեմ որ սա բաները ամենէն պէտքը չեն. ես ըլլայի՝ աղջիկդ ուզողն մարդուն հետ կը կարդէի զան։

Լիւքրէս. Ես ալ՝ կը կարծեմ որ աղջիկդ կարդուելու ամենէն յարմար չէ։ Անոր մարմինը խիստ քնքուշ և խիստ վատառողջ կազմուածք մը ունենալուն համար՝ այսպէս վիճակի մէջ զան կարդելը՝ շուտով միւս աշխարհքը խրկելու զրկել է։ Աշխարհք մտնելը ամենէն իր գործը չէ. խորհուրդ կուտամ քեզի որ զան վանքի մը մէջ դնես, ուր իր բնութեանը յարմար կրնայ զբաղանքներ գտնել։

Սկանարէլ. Շիտակը՝ ամենքնուդ խորհուրդն ալ զարմանալի է. բայց կարծեմ թէ քիչ մը ձեր անձին շահուն կը քաշէք։ Պ. Յովս, դուն ոսկերիչ ես, և խորհուրդդ քու սիրտդ կը յայտնէ, որ կը բաղձաս քու վաճառքդ ծախել։ Դուն՝ գորգեր կը ծախես, Պ. Գուլիէլմոս, և կ՚երևի թէ քանի մը ծաղկենկար օթոցներ ունիս, որոնք կ՚ուզես ձեռքէ հանելի՝ սած մարդդ, գրացուհիս, կ՚ըսեն թէ իմ աղջկանս հակամիտութիւն ունի եղեր, բայց կարծեմ չես վճռանար երբ աղջիկս ուրիշի հետ կարդուած տեսնես։ Իսկ դուն, իմ սիրելի եղբօր աղջիկս, իմ միտքս որ և իցէ մարդու մը հետ կարդել չէ աղջիկս, և ասոր համար պատճառներ ունիմ. բայց զան կրօնաւոր ընելու համար տուած խրատդ այնպէս կնոջ մը խրատը կը նմանի, որ կը բաղձայ իմ բոլոր ինչքիս ժառանգը ըլլալ։ Այսպէս, Պարոնայք և տիկնայք, թէ և ձեր խրատները խիստ լաւ ըլլան, չվճռանաք, կ՚աղաչեմ, թէ որ մէկերնուդ մտիկ չընեմ։ (Անոնք.) Այս ինչ

կերպ նորաձև խրատատուները են։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԼՈՒԿԻՆԴԱ, ՍԿԱՆԴԱՐԻԼ։

Սկանարէլ. Ո՛հ, ահա աղջիկս որ պտըտելու ելեր է։ Բայց զիս չտեսաւ. ոհ, ինչպէս կը հառաչէ ու աչքերը դէպ 'ի երկինք կը վերցընէ։ (Լուկինդային.) Յառաջ բարի, սիրելի աղջիկս, ինչ ունիս, ինչ է այդ։ Ի՞նչպէս ես. միշտ այդպէս տրտում և մելամաղձոտ պիտի մնաս, և չե՞ս ուզեր ինձ ըսել թէ ի՛նչ ունիս։ Եկո՛ւ, բա՛ց ինձի քու փոքրիկ սիրտդ։ Ը՛սէ, սիրելիս, ըսէ, ըսէ՛ սիրելի հօրդ քու փոքր խորհուրդներդ։ Դաշալերութիւն, կ'ուզե՞ս որ զբեղ համբուրեմ։ Եկո՛ւ։ (Ա՛ռանձին.) Օ՜ն այսպէս ընութեան մէջ տեսնելով չեմ գիտեր ի՞նչ ընեմ։ (Լուկինդային.) Բայց ըսէ՛ ինձի, կ'ուզե՞ս որ քեզի համար ցաւով մեռնիմ, և պիտի չկարենամ գիտնալ թէ այդ տխուր թախծութիւնդ ո՞ր կից է։ Յայտնէ՛ ինձի պատճառը, և ես խօսք կու տամ որ քեզի համար ամեն բան կ'ընեմ։ Է՜յ, միայն քու տրտմութեանդ պատճառը ըսէ՛ ինձի. յիրաւի կ'ըսեմ և երդում կ'ընեմ որ զբեզ գոհ ընելու համար ամեն ուզածդ կ'ընեմ։ Արդեօք բարեկամուհիներդ մէկը աւելի վայելչաղարդ ըլլալուն համար՝ ա՞նոր վրայ՞ կը նախանձի՞ս. արդեօք նոր կերպա՞ս մը տեսար և կ'ուզես զդեստ շինել։ Կարծեմ ո՛չ. Արդեօք սենեակդ այնչափ զարդարած չէ՞ր եւար քեզի, և կ'ուզէ՞ր որ Ս. Լաւրենտիոսի տօնավաճառին մէջ դահլիճ մը ունենալ։ Ա՛ս ալ չէ։ Կ'ուզե՞ս բան մը սորվիլ. կ'ուզե՞ս որ վարժապետ մը բռնեմ որ քեզի երաժշտութիւն մը սորվեցընէ։ Բնաւ։ Մէկը կը սիրէ՞ր, և կ'ուզէ՞ր կարդուիլ։

(Լուկինդա նշան կ'ընէ թէ այո՛)

ԲՅ ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՍԿԱՆԴԱՐԻԼ, ԼՈՒԿԻՆԴԱ, ԼԻՋԷԹ։

Լիզէթ. Ի՞նչ ըսիր, պարոն, աղջկանդ հետ խօսակցեցար. կրցա՞ր անոր մելամաղձութեան պատճառը իմանալ։

Սկանարէլ. Ո՛չ, անդդամ աղջիկ մը է, որ զիս կը նեղացընէ։

Լիզէթ. Պարոն, աս գործը ինձի ձգէ, ես հիմա անոր միտքը կը հասկընամ։

Սկանարէլ. Հարկաւոր չէ. և ոչ ոք մեզի հետև ասանկ բնութիւն մը ստացեր է, կը պատուիրեմ որ քովը մարդ չերթայ։

Լիզէթ. Ա՛ս գործը ինձի ձգէ, կ'ըսեմ։ գուցէ քեզմէ աւելի ինձ համարձակ կը յայտնէ իր գաղտնիքը։ (Լուկինդային.) Ի՞նչ, տիկին, պիտի չըսե՞ս մեզի թէ ի՞նչ ունիս, և այսպէս ամեն մարդուն սիրտը պիտի վշտացընե՞ս։ Կարծեմ թէ ըրածդ անվայելուչ է, և թէ որ հօրդ յայտնելու կը քաշուիս, պէտք չէ՞ որ ինձմէ ալ քաշուիս քու սրտիդ գաղտնիքը ինձի ըսելու։ Ը՛սէ՛ ինձի, բան մը կ'ուզե՞ս անորմէ։ Հաղար անդամ ըսած է՞ որ քու բաղձանքդ կատարելու համար բան մը չխնայեր։ Մի՛թէ ուզածիդ չափ քեզ աղա-

տուԹիւն տուած չէ՞, և գոհ չէ՞ս ժուռգալներէդ ու առած պարգևներէդ։ Աբդեօք մէկը սիրտդ վշտացուցած է։ Բ՛սէ՛ ինձի, մէկու մը հակամիտուԹի ունիս, որուն հետ ուզէիր որ հայրդ գքեզ կարգէ։ Ո՛հ, կ՛իմանամ, ատ է. ինչու այդչափ կ՛երկնցընես։ — Պարոն, գաղտնիքը յայտնուեցաւ, և...

Սկանարէլ. Գնա՛, ապերախտ աղջիկ, չեմ ուզեր ալ հետդ խօսիլ, ու դուն քու յամառուԹիւնովդ մնացիր։

Լուկինդա. Հայր իմ, ըստ որում կ՛ուզես որ միտքս յայտնեմ...

Սկանարէլ. Ա՛յո՛, ալ այսուհետև քեզ չեմ սիրեր։

Լիցէթ. Պարոն, անոր տրտմուԹիւնը...

Սկանարէլ. Անդգամ մը է որ զիս մեռցընել կ՛ուզէ։

Լուկինդա. Հայր, կ՛ուզեմ որ...

Սկանարէլ. Օ՜քեզ այդպէս մեծցընելուս վարձքը սա է։

Լիցէթ. Բայց, պարոն...

Սկանարէլ. Ո՛չ, խիստ բարկացեր եմ անոր։

Լուկինդա. Բայց, հայր...

Սկանարէլ. Ալ չեմ սիրեր քեզ։

Լիցէթ. Բայց...

Սկանարէլ. Խաբեբայ մը է...

Լուկինդա. Բայց...

Սկանարէլ. Ապերախտ մը...

Լիցէթ. Բայց...

Սկանարէլ. Անդգամ մը որ չուզեր ըսել Թէ ինչ կ՛ուզէ.

Լիցէթ. Ուզածը էրիկ մը է։

Սկանարէլ (Ձայնը բարձրացնելով). Աչքէ՛ կը հանեմ զան։

Լիցէթ. Իրիկ մը։

Սկանարէլ. Չեմ սիրեր զան։

Լիցէթ. Իրիկ մը։

Սկանարէլ. Իբրև աղջիկս չեմ ճանչնար։

Լիցէթ. Իրիկ մը։

Սկանարէլ. Ոչ, ալ անոր վրայօք մի՛ խօսիր ինձի։

Լիցէթ. Իրիկ մը։

Սկանարէլ. Ալ անոր վրայօք մի՛ խօսիր ինձի։

Լիցէթ. Իրիկ մը։

Սկանարէլ. Ալ անոր վրայօք մի՛ խօսիր ինձի։

Լիցէթ. Իրիկ մը, էրիկ մը, էրիկ մը։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԼՈՒԿԻՆԴԱ, ԼԻՑԷԹ։

Լիցէթ. Շատ ճշմարիտ է ան խօսքը որ կ՛ըսէ Թէ անոնցմէ աւելի խուլ չկայ, որոնք ականջ ունին և չեն ուզեր լսել։

Լուկինդա. Ի՞նչ կ՛ըսես, Լիզէթ, գէշ ըրի որ տրտմուԹեանս պատճառը չյայտնեցի, և իմ հօրմէս ուզածս առնելու համար՝ պէտք էի միտքս յայտնել, կը տեսնես։

Լիցէթ. Ճշմարիտ, հայրդ դաբշելի մարդ մը է, և կը խոստովանիմ որ խիստ շատ պիտի ուրախանամ եԹէ անոր խաբէուԹիւն մը ընեմ։ Բայց ի՞նչ է պատճառը, տիկին, որ մինչև ցայսօր վիշտդ ինձմէ պահեցիր։

Լուկինդա. Աչիսս, ի՞նչ օգուտ պիտի տեսնէի Թէ որ ասկէ առաջ քեզի յայտնէի, աւելի շահած չէր ըլլայի որ ասս տրտմուԹիւնս սրտիս մէջ բոլոր կենացս մէջ պահէի։ Կը կարծես որ հիմա ի՞նչ որ տեսանք առաջուց միտքէս

չանցաւ, և հօրս բոլոր զգացմունքները աղէկ չէի գիտեր, ու դիս բարեկամի մը բերնով ուզողին չէ ըսելը՝ սրտիս մէջ ամէն յոյսս չկտրեց։

Լիցէթ. Ի՛նչ, այն քեզի ուզող անծանօթ մարդուն համար դուն...

Լուկինդա. Գուցէ չվայելեր աղջիկի մը որ այսչափ համարձակ իր սրտինը յայտնէ. բայց, ճշմարիտ կ'ըսեմ, թէ որ ինծի ձգէին՝ ես զան պիտի ուզէի։ Թէպէտև իրարու հետ ամենևին չխօսակցեցանք, և իմ վրաս ունեցած սէրը իր բերանովը ինծի չյայտնեց. բայց ուր տեղ որ կրցաւ դիս տեսնել, իր նայուածքները և գործքերը ինծի հետ այնչափ սիրով խօսեցան, և մէկու մը բերնով դիս ուզելուն համար՝ այնչափ ազնիւ մարդ մը երևցաւ ինծի, որ իմ սիրտս բոլորովին անոր հետ կապուեցաւ. բայց տես, հօրս խստութիւնը մեր սէրը ուր կը տանի։

Լիցէթ. Դուն այդ բանը իմ վրաս ձգէ։ Ո՛րչափ որ ինձմէ պահած գաղտնիքիդ համար սիրտս նեղացած է, չեմ ուզեր ալ որ քու սիրոյդ մէջ գրեղ անյոյս թողում. միայն թէ աղէկ դիտաւորութիւն ունենաս...

Լուկինդա. Ի՛նչ կրնայի ընել հօրս իշխանութեանը դէմ, և եթէ ան իմ բաղձանքներուս անողոքելի է...

Լիցէթ. Գնա՛ բանդ, պէտք չէ որ տղէտի մը պէս ինքզինքդ անոր իշխանութեանը տակ ձգես. և միայն թէ մարդ իր պատիւը չկորսնցրնէ, կրնայ իր հօրը բռնութենէն քիչ մը ազատել զինքը։ Ի՞նչ պիտի ընես։ Մինթէ կարգուելու ատենդ չէ՞, և կը կարծէ՞ ան որ դուն մարդ չէս. դարձեալ կ'ըսեմ, ես քու սիրոյդ համար պիտի աշխատիմ և բոլոր հոգը վրաս կ'առնում. պիտի տեսնես թէ ո՛րչափ հնարքներ գիտեմ եղեր ես... Բայց ահա հայրդ կը տեսնեմ։ Դլուխնք երթանք, և դուն գործը ինծի ձգէ։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Սկանարել։

Աղէկ բան է երբեմն չլսելու զարնել այն բաները որ շատ աղէկ կը լսենք, և շատ խելացիութիւն ըրի անոր սէրը ինծի յայտնած ատենը խլութիւն ձևացընելը, որովհետև՝ թէև մտիկ ընէի՝ հաւանութիւն պիտի չտայի անոր։ Այս սովորութենէն աւելի բռնական բանմը տեսնուած է որ զաւակները իրենց հայրերը հնազանդեցրնել ուզեն. ասկէ աւելի անվայելուչ և ծանակութեան արժանի բանմը կայ որ մեծ աշխատութիւններով հարստութիւն ժողվենք, և մեծ խնամքով ու գորովանօք աղջիկ մեծցրնենք, որպէս զի թէ մէկէն և թէ մէկալէն կողոպտուինք անանկ մարդու մը ձեռքով, որ ամենևին մեզի օգուտմը չունի։ Ո՛չ, ո՛չ, ասս սովորութիւնը ինծի համար չէ, ու ես իմ ինչքս և աղջիկս ինծի կը պահեմ։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՍԿԱՆԱՐԵԼ, ԼԻՋԵԹ։

Լիզեթ. (Ֆոպրին վրայ վազելով, ու Սկոնարելը չտեսնելու զարնելով). Ա՛հ, այս ինչ ձախորդութիւն է, ինչ դժբաղդութիւն։ Ո՛հ, խե՛ղճ պարոն Սկանարէլ, ո՞ւր արդեօք տեսնելու եմ քեզի։

Սկանարեզ. (ինքնիրեն). Ի՞նչ կ'ըսէ։

Լիզեթ. (ձեռը վազելով). Ա՛հ, դըժբաղդ հայր. ինչ պիտի ընեմ երբ այս լուրը իմանամ։

Սկանարեզ. (ինքնիրեն) Ի՞նչ է արդեօք։

Լիզեթ. Խե՛ղճ տիկինս։

Սկանարեզ. (ինքնիրեն). Կորսուեցա՛յ։

Լիզեթ. Ո՛հ։

Սկանարեզ. (Լիզեթին երեսէն վազելով). Լիզէթ։

Լիզեթ. Ի՞նչ դժբաղդութիւն։

Սկանարեզ. Լիզէթ։

Լիզեթ. Ի՞նչ դիպուած։

Սկանարեզ. Լիզէթ։

Լիզեթ. Ի՞նչ աղէտ։

Սկանարեզ. Լիզէթ։

Լիզեթ. (կոչնելով). Ա՛հ, պարոն . . .

Սկանարեզ. Ի՞նչ է ան։

Լիզեթ. Պարոն . . .

Սկանարեզ. Ի՞նչ կայ։

Լիզեթ. Աղջիկդ . . .

Սկանարեզ. Ո՛հ, ո՛հ։

Լիզեթ. Պարոն, այդպէս մի՛ լար, ինչու որ իմ ծիծաղս կը բերես։

Սկանարեզ. Ըսէ՛ ուրեմն շուտով, ի՞նչ կայ։

Լիզեթ. Աղջիկդ՝ իրեն ըսած խօսքերէդ եաև, և տեսնելով որ անոր սաստիկ բարկացեր ես, իր սենեակը ելաւ շուտով, և յուսահատութեամբ լցուած՝ գետին վրայ նայող պատուհանը բացաւ։

Սկանարեզ. Ետքը։

Լիզեթ. Ընտաեն՝ աչքերը երկինքը վերցընելով. "Ո՛չ, ըսաւ, անհնարին է ինծի հօրս բարկութեամբը ապրիլ, և որովհետև զիս իբրև իր աղջիկը չընդունիր, ես ալ կ'ուզեմ մեռնիլ"։

Սկանարեզ. Ի՛նչ, ինքզինքը մէջը նետեց։

Լիզեթ. Ո՛չ, պարոն։ Կամաց մը պատուհանը գոցեց, և դնաց իր անկողնոյն վրայ փռուեցաւ, ուր դառնագին սկսաւ լալ. և յանկարծ իր դէմքին գոյնը նետեց, աչքերը դարձան, շունչը կտրեցաւ, ու իմ բազուկներուս մէջ մնաց։

Սկանարեզ. Ա՛հ, աղջիկս, ուրեմն մեռաւ։

Լիզեթ. Ո՛չ, պարոն։ Այնչափ աշխատեցայ որ խելքը գլուխը բերի, բայց որովհետև վայրկեանէ վայրկեան նորէն այս հիւանդութիւնը վրան կու գայ, կարծեմ որ մինչև գիշեր չկրնար ապրիլ։

Սկանարեզ. Շամփանները, Շամփանները, Շամփանները։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՍԿԱՆԱՐԵԼ, ՇԱՄՓԱՆԵՐ ԼԻՋԵԹ։

Սկանարեզ. Գնա՛ շուտով մէկ շատ բժիշկներ կանչէ։ Այսպէս դիպուածի մը մէջ խիստ շատ հարկաւորու-

թիւն ունինք։ Ո՛հ, աղջիկս, իմ խե՛ղճ աղջիկս։

ԸՐԸՐՈՒԸՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՍԿԱՆԱՐԵՆ, ԼԻՋԵԹ։

Լիզեթ. Ձորս բժիշկը ինչ պիտի ընես, պարոն. մարդ մը մեռցընելու համար մէկը միայն բաւական չէ՞։

Սկանարեն. Լա՛ւ կեցիր. ձորս խորհուրդը մէկ խորհուրդէն աւելի աղէկ է։

Լիզեթ. Մինթէ աղջիկդ առանց այս պարոններուն օգնութեանը չի՞ կրնար հանդարտ մեռնիլ։

Սկանարեն. Մինթէ բժիշկները մարդ կը մեռցընեն։

Լիզեթ. Ընտարակոյս. բարեկամս մէկը իրաւացի պատճառներով կը հաստատէ որ պէտք չէ ըսել թէ. Այս ինչ մարդը տենդէ կամ այն ինչ հիւանդութենէ մեռաւ. բայց եթէ՝ ձորս բժիշկներու և երկու դեղավաճառներու ձեռքով մեռաւ։

Սկանարեն. Լա՛ռ. ան մարդիկներուն մեղքը մի՛ մտներ։

Լիզեթ. Ճշմարիտ կ՚ըսեմ, պարոն, մեր կատուն, ասկէ քանի մը օր առաջ, տանը բարձրութենէն ճամբուն մէջ ցատկելով, երեք օր առանց ուտելու և առանց ոտքերը և թաթիկները շարժելու մնալէն ետև՝ աղատեցաւ. բայց շատ երջանիկ է եղեր որ ամենևին կատու բժիշկներ չկան, ինչու որ իր գործը պիտի լըմննար, և բժիշկները անմիջապէս մաքրողական դեղ տալու և արիւն առնելու էին։

Սկանարեն. Պիտի լըմ՝ կ՚ըսեմ։ Բայց նայէ ինչպէս յանդգնութեամբ կը խօսի։ Ա՛հա եկան։

Լիզեթ. Ոգոյշ կեցիր, քեզի աղէկ պիտի չիտկեն։ Լատիներէն լեզուով պիտի իմացընեն թէ աղջիկդ հիւանդ է։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՊՐԷ. ԹՈՄԷՍ, ՏԷՖՕՆԱՆՏՐԷՍ, ՄԱՔՐՈՊՈՆ, ՊԱՏԷ. ՍԿԱՆԱՐԵՆ, ԼԻՋԵԹ։

Սկանարեն. Ի՞նչ լաւ ունիք, պարոններ։

Պ. Թոմէս. Բաւական հիւանդը նայեցանք, և անտարակոյս շատ ապականուած է։

Սկանարեն. Աղջիկս ապականուած է։

Պ. Թոմէս. Իր մարմնոյն մէջ շատ ապականեալ հիւթեր կան ըսել կ՚ուզեմ։

Սկանարեն. Հիմա հասկըցայ։

Պ. Թոմէս. Բայց. . . . ամենքնիս մէկտեղ խորհուրդ պիտի ընենք հիմա։

Սկանարեն. Ա՛թառներ բերէք։

Լիզեթ. (Պ. Թոմէսին). Ո՛հ, պարոն, հրամանքդ ես։

Սկանարեն. (Լիլիէին). Ուրկից կը ճանչնաս պարոնը։

Լիզեթ. Մէկալն օր եղբօրդ աղջկան բարեկամին տունը տեսայ զան։

Պ. Թոմէս. Ի՞նչպէս է անոր կառավարը։

Լիզեթ. Շատ աղէկ է. ինչու որ մեռաւ.

Պ. Թոմաս. Մեռա՞ւ։

Լիցեթ. Այո՛։

Պ. Թոմաս. Ա՛հ անկարելի է։

Լիցեթ. Անկարելի ըլլալը չեմ գիտեր, բայց գիտեմ որ մեռաւ։

Պ. Թոմաս. Մեռած պիտի չըլլայ, կ'ըսեմ։

Լիցեթ. Իս ալ, կըսեմ թէ մեռաւ և թաղուեցաւ ալ։

Պ. Թոմաս. Կը սխալիս։

Լիցեթ. Աչքովս տեսայ։

Պ. Թոմաս. Անկարելի բան է. Հիպոկրատ կ'ըսէ թէ այն տեսակ հիւանդութիւնները տասնուչորս կամ քսան և մէկ օր կը տևեն. անոր հիւանդանալը վեցն օր է միայն։

Լիցեթ. Հիպոկրատ ուզածը կըընայ ըսել, բայց կառավարը մեռաւ։

Սկանարեզ. Բերանդ գոցէ, դատարկապորտ։ Երթանք ասկէ. պարոններ, կ'աղաչեմ ձեզի որ աղէկ խորհուրդ ընէք։ Թէոպէտև ստակը առաջ տալու սովորութիւն չկայ, բայց չըլլայ թէ մոռնամ, և որպէս զի այս գործն ալ լմննայ, ահա՛....

(Անոնց պոռալը կոպոպ, և ամէն մէնը ձերդ ձերդ շարժմունքներով պոռալը ի՛նչպոռնին)։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԳՐՔ. ՏԵՖՕՆԱՆՏՐԵՍ. ԹՈՄԷՍ, ՄԱՔԲՐՈԹՈՆ. ԳԱՀԻ։

(Կը նստին և կը հաշան)։

Պ. Տեֆոնանտրես. Փարիզ քաղաքը արտաքոյ կարգի մեծ է, և պէտք է ամէն ատեն երկար ժամանակ պըտտիլ։

Պ. Թոմաս. Իս ամ բանիս համար սքանչելի մատակ ջորի մը ունիմ, դժուար է հաւատալ թէ ո՛րչափ ճամբայ կը քալեցընեմ ամէն օր։

Պ. Տեֆոնանտրես. Իս ալ հրաշալի ձի մը ունիմ, որ ամենևին չի յոգնիր։

Պ. Թոմաս. Գիտէք ո՛րչափ տեղ քալեց այսօր ջորիս։ Նախ և առաջ Նաւարանը գացի, Նաւարանէն Էն Դէրմէն Բրուարձանին ծայրը, Էն Դէրմէն Բրուարձանէն Մարէին ներսերը, Մարէէն Էնթ — Օնորէի դուռը, Էնթ — Օնորէի դռնէն Էն — Դաղ արուարձանը, Էն — Դաղ արուարձանէն Ռիշելիէօյի դուռը, Ռիշելիէօյի դռնէն հոս. և ասկէ տակաւին Թագաւորական — Հրապարակը երթալու եմ։

Պ. Տեֆոնանտրես. Իմ ձիս այս օր բոլոր այդ տեղերը գնայ, և ատոնցմէ զատ՝ Ռիւէլ գայի հիւանդ տեսնելու համար։

Պ. Թոմաս. Բայց, աղէկ ժամանակը եկաւ, Թէոփրաստէս և Բրտեմիոս երկու բժիշկներուն կռիւին մէջ ո՞ր կողմն ես, ինչու որ այնպէս մէկ գործ մ'է, որ բոլոր մեր միաբանութիւնը կը բաժնէ։

Պ. Տեֆոնանտրես. Իս Բրտեմիոսի կողմն եմ։

Պ. Թոմաս. Իս ալ։ Ես թէ ինչպէս յայտնի է՝ իր խորհուրդովը հիւանդը մեռաւ; և թէ ստուգիւ Թէոփրաստէսին խորհուրդը ընդունելի էր. բայց պարագաներուն մէջ իրաւունք չունի, և պէտքը չէր իր առջինէն ուրիշ կարծիք մը ունենալ։ Ի՞նչ կ'ըսէք դուք։

Պ. Տեֆոնանտրես. Ընտարակոյս,

պէտք է միշտ սովորութեան կանոնները պահել։

Պ. Թոմաս. Ես այս բանին մէջ շատ խիստ եմ, միայն՝ եթէ բարեկամներու մէջ ըլլամ. օր մը մեզմէ երեք հոգի և մէկ դրսի բժիշկ կանչեցին խորհուրդ մը ընելու համար. բայց ես խորհուրդը կիսատ թողուցի և չուզեցի որ հիւանդին դէշ վիճակին վրայ ըրած կարծիքներին յայտնեն։ Հիւանդին տէրերը ի՛նչ ընելիքներին չէին գիտեր, և հիւանդը քանի կ՚երթար կը ծանրանար, բայց ես ամենևին միտքս չփոխեցի, և հիւանդը աս վիճին ժամանակը մեռաւ։

Պ. Տէփոնանտրէս. Շատ աղէկ ըրեր ես, որպէս զի ասով մարդիկ ապրիլ սորվին և գիտնան թէ ինչպէս պէտք է գործ տեսնել։

Պ. Թոմաս. Մեռած մարդը մեռած է, և ուրիշ հետևութիւն չունի. բայց թէ որ սովորական օրէնք մը զլացուի՝ բժիշկներուն բոլոր միութիւնը մեծ նախատինք մը կը բերէ։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Սկանարէլ. Պրոֆ. Թոմաս, Տէփոնանտրէս, Մաքրոթոն, Պահ.

Սկանարէլ. Պարոններ, աղջկանս տագնապը քանի կ՚երթայ՝ կ՚աւելնայ. կ՚աղաչեմ՝ շուտով ըսէք թէ ի՛նչ որոշեցիք։

Պ. Թոմաս (Պ. Տէփոնանտրէսին). սկսէ, պարոն։

Պ. Տէփոնանտրէս. Ո՛չ, դուն սկսէ, պարոն, կ՚աղաչեմ։

Պ. Թոմաս. Կատակի՞ համար կ՚ըսես։

Պ. Տէփոնանտրէս. Ես առաջ չեմ խօսիր։

Պ. Թոմաս. Պարոն...

Պ. Տէփոնանտրէս. Պարոն...

Սկանարէլ. Կ՚աղաչեմ, պարոններ, այդչափ պատիւները մէկդի թողուցէք. քանզի հիւանդը վտանգի մէջ է, և գիտցէք որ դորձերնիս ստիպողական է։

(Զորսերնէն մէկուն նը խօսին)։

Պ. Թոմաս. Աղջկանդ հիւանդութիւնը...

Պ. Տէփոնանտրէս. Այս պարոններուն կարծիքը...

Պ. Մաքրոթոն. Ա-ղէկ մը խորհուրդ ը-նե-լէն ետ-քը...

Պ. Թոմաս. Մոռք դատելու համար...

Սկանարէլ. Ի՛հ, պարոններ, կ՚աղաչեմ մէկ մէկ հոգի խօսեցէք։

Պ. Թոմաս. Պարոն, աղջկանդ հիւանդութեանը վրայ քննութիւն ըրինք. և իմ կարծիքս ան է որ անոր հիւանդութիւնը արիւնին խիստ տաքութենէն յառաջ եկած է. ուստի կը հետևցնեմ որ կարելի եղածին չափ շուտովանկէ արիւն առնել տաք։

Պ. Տէփոնանտրէս. Ես ալ կ՚ըսեմ որ անոր հիւանդութիւնը խիստ շատ հիւթերու առատութենէ պատճառեալ ապականութիւն մը է. ուստի՝ ես ալ կ՚եզրակացնեմ որ անոր որձացուցիչ դեղ տաք։

Պ. Թոմաս. Ես կը հաստատեմ որ որձացուցիչ դեղը զան պիտի մեռցնէ։

Պ. Տէփոնանտրէս. Ես ալ կը հաստատեմ որ արիւն առնելը զան պիտի մեռցնէ

Պ. Թոմաս. Վերջ մեայ ճարտար մարդու գործ ընելը։

Պ. Տէֆօնանտրէս. Այո՛, ինձի. և ամեն տեսակ հմտութեան մէջ քեզի ծոցէս կը հանեմ։

Պ. Թոմաս. Կը յիշե՞ս այն մարդը, որ անցեալ օրերը մեռցուցիր։

Պ. Տէֆօնանտրէս. Կը յիշե՞ս դուն ալ այն տիկինը, որ երեք օր կայ՝ միւս աշխարհքը խրկեցիր։

Պ. Թոմաս (Սկանարէլլին). Այս իմ կարծիքս քեզի ըսի։

Պ. Տէֆօնանտրէս (Սկանարէլլին). Այս իմ միտքս քեզի ըսի։

Պ. Թոմաս. Թէ որ աս վայրկենիս արիւն առնել չտաս, աղջիկդ մեռած սեպէ։

(Դուրս կելլէ)։

Պ. Տէֆօնանտրէս. Թէ որ արիւն առնել տաս, քառորդ մը պիտի չապրի աղջիկդ։

(Դուրս կելլէ)։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Սկանարէլ, Պրոֆ. Մաքրոթոն, ՊաՀի։

Սկանարէլ. Այս երկուքէն որո՞ւ հաւատալ պէտք է. այսպէս երկու իրարու հակառակ կարծիքներուն ո՞րը որոշելու է։ Պարոններ, կ'աղաչեմ՝ հասկրցուցէք ինձի, և առանց կրից ըսէք՝ թէ իմ աղջկանս տագնապը թեթևցընելու համար ի՞նչ պէտք է ընել։

Պ. Մաքրոթոն. Պա-րոն, աս նիւթ-բուն մէջ պէտք է խո-հեմու-թեամբ վճռ-ռել, և առանց խոր-հրդոյ, ինչ-պէս կ'ը-սեն, բան մը չը-նել, ե-թէ ոչ՝ ըստ մեր Հիպոկրատ վարժա-պետ-ին, մէկ սը-խալ-մուն-քը վը-տան-գա-ւոր հետ-ևու-թի մը կ'ու-նե-նայ։

Պ. Պանի (Լէֆոպալը). Ատոյդ է, ի՞նչ որ ընենք՝ պէտք է զգուշութեամբ ընենք, ինչու որ ամենեին տղայական խաղեր չեն ասոնք. և երբ սխալելու ըլլայ մէկը՝ գիւրին չէ սխալածը շտկել և աւրածը վերստին շինել. Լ'ոփէրիմէնտո՞մ դէրիոնտո՞ ըսը՞մ։ Ասոնց որոյ պէտք է առաջուց զննել, բաները աղէկ քննութեամբ կըշռել, մարդկանց բնաւորութիւնը նայիլ, հիւանդութեան պատճառները քննել, և անոր յարմար՝ տալու դեղերը նայիլ։

Սկանարէլ (Ա՞ռանձին). Մէկը կը-բիայի պէս կը-քալէ, միւսը սուր-հանդակին ետևէն կը վազէ։

Պ. Մաքրոթոն. Ա-ս-տի, պա-րոն, խօս-քեր-նիս լը-մին-ցը-նե-լու հա-մար, կար-ծեմ թէ աղ-ջի-կը-դ հին-ցած հի-ւանդու-թիւն մը ու-նի, և թէ որ ա-նոր դար-ման մը չը-լլ-ուի, կը-նայ վը-տան-գի մը հասնիլ, վասն զի՝ ա-նոր ու-նե-ցած հի-ւան-դու-թեան նը-շան-նե-րը մէկ թան-ձրա-մած և բարկ շը-գի մը կը ցու-ցը-նեն որ ա-նոր ու-ղե-ղին մը-թե-ը կը կըս-կը-ծէ։ Ա՛յդ՝ այս շը-գին, ո-բուն Յու-նարէն ան-մոս ա-նու-նը կու տանք, ո-ր-ս-վայ-նին ատո-ր-ին մասե-բուն մէջ պա-ր-ու-նակ-ուած ա-պա-կա-նեալ, գիւրա-մած և թան-ձրա-ցած հիւթե-ր-ե յա-ռաջ կու գայ։

Պ. Պանի. Այս այն հիւթերը երկար ատենէ 'ի վեր յառաջ եկած ըլլալուն համար, հոն կարծրա-

ցեր են, և այն վնասը եղած է որ շոգին դէպ 'ի ուղեղն կողմը կ'երթայ։

Պ. Մաքրոնոն. Ուս-տի՝ այն ըսուած հիւ-թե-րը հա-նելու, խը-լե-լու, հա-լա-ծելու, դուրս հա-նե-լու հա-մար ու-ժեղ մաք-րո-զա-կան դեղ մը պէտք է։ Բայց ա-մեն բանէն ա-ռաջ՝ վա-յե-լուչ կը տես-նեմ ա-նոր մեղ-մա-ցուցիչ փոքր դե-ղերը տա-լու փորձեր ը-նել, այս-ինքն՝ լուսացո—զա—կան ու մաք—րո—զա—կան փոք—րիկ գրեթ—ներ, ըմ-պե—լի դե—ղեր և բու—սա—լուրով խառ—նուած զո—վա—ցուցիչ օ—շա—բակ—ներ։

Պ. Պահի. Ամենցմէ եւրքը՝ մաքրողական դեղը և արիւն առնելը կը նայինք և եթէ հարկաւորելու ըլլայ՝ գործողութիւնը կը կըրկնենք։

Պ. Մաքրոնոն. Ձեմ ը—սեր թէ աս բո—լոր բա—նե—րը ը—նելէն ետև՝ աղ—ջիկդ պի—տի չի մեռ—նի. բայց դո—նէ բան մը ը—բած կ'ել—լաս, և պի—տի մը—խի—թար—ուիս, գիտ—նալով որ աղ—ջիկդ ըստ օ—րի—նի պի—տի մեռ—նի։

Պ. Պահի. Աւելի աղէկ է կանոններուն համաձայն մեռնիլ, քան թէ կանոններէն ետ կենալ։

Պ. Մաքրոնոն. Մենք ան—կեղ—ծու—թեամբ մեր միտ—քը քեզի ը—սինք։

Պ. Պահի. Լու մեր եղբօրը հետ խօսեցածնուս պէս քեզի հետ խօսեցանք։

Սկանարէլ (Մաքրոնոնին՝ անոր պէս Բաւերը երկնչելով). Ակ—նա—ծական ե—բախ—տա—գի—տու—թիւն կը մա—տու—ցա—նեմ քե—զի։ (Պ. Պահիին՝ անոր պէս լէ-պալով.) Ինձի ըրած ծառայութեանդ համար մեծապէս շնորհակալ եմ։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

Սկանարէլ։

Հիմա՝ իմ գլուխս առաջուանէ աւելի տարտամ է։ Ինչ խենդ բան է այս. միտքս բան մը կուգայ։ Երթամ քիչ մը դեղթափ ծախու առնեմ, և աղջիկս զան առնելատամ. դեղթափը այնպէս դեղ մը է, որով շատ մարդիկ առողջացած են։

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ.

Պրդ. Փիւզրէն, Թոմէս, Տեքօնանտրէս։

Պ. Փիշրէն. Ձէք ամէնաբ ամենեւին, պարոններ, որ այդպէս ոգիտուութիւ գործ կը տեսնէք և պզտիկ անառակ տղաքներու պէս իրարու հետ կը կռուիք։ Ձէք նայիր որ աս տեսակ կռիւները ինչպէս մարդոց առջև մեր պատիւը կը կարուի, մինթէ բաւական չէ որ միայն գիտունները մեր հեղինակներուն և առջի վարժապետներուն մէջ եղած հակառակութիւնները և անմիաբանութիւնները գիտնան, և պէտք է որ մեր վէճերովը և կռիւներովը մեր ազգուեստին խաբէութիւնը ժողովուրդին յայտնենք. Լու այս մեր

մարդկանց մէկ քանիներուն դէշ սովորութենէն ամենեւին բան մը չեմ հասկընար։ Եւ պէտք է խոստովանիլ որ բոլոր այս վէճերով քանի մը ժամանակէ 'ի վեր մեր համբաւը շատ կորսնցուցինք, եւ եթէ չզգուշանանք, մեր ձեռքովը մեր տունը պիտի փլենք։ Այս իմ շահուս համար չեմ խօսիր։ Ինչու որ, փառք Աստուծոյ՝ ես արդէն իմ պզտիկ գործքերս կարգի դրեր եմ։ Կ'ուզէ հով ըլլայ, կ'ուզէ անձրեւ՝ դայ, կ'ուզէ կարկուտ, մեռած մարդիկը մեռած են եւ կենդանիներուն հետ վարուելու միջոցը ունիմ։ Բայց վերջապէս այս կռիւները բժշկութեան օգուտ մը չունին։ Եւ որովհետեւ Աստուած մեզի շնորհք ըրած է որ այնչափ դարերէ 'ի վեր ժողովուրդը նախապաշարեալ մնայ մեր վրայ, ուստի պէտք չէ որ մեր յիմար ապստամբութիւններովը մեր տգիտութիւնը մարդկանց յայտնենք, եւ կրցածնուս չափ հանդարտութիւնովանոնց յիմարութեամբը գործերնիս տեսնենք։ Ինչպէս որ գիտէք՝ մարդկային տկարութեան առջեւ գերազանց երեւնալու աշխատողները միայն մենք չենք։ Շատերուն ուսմունքը աս բանիս վրայ հիմնեալ է։ Եւ իւրաքանչիւր ոք կ' աշխատի որ մարդկանց տգիտութեամբը օգուտ մը քաղէ։ Շողոքորթները կը ջանան մարդիկներուն ցանկացած սնոտի գովութիւնները ընել, եւ ինչպէս յայտնի է՝ աս այնպէս արուեստ մը է, որով մեծ հարստութիւններ կը ժողովուին։ Ոսկեփոխ քիմիագործները՝ մարդոց՝ հարստութեանց վրայ ունեցած ցանկութիւնը առիթ կը բռնեն՝ իրենց մոլիկ ընողներուն ոսկեղէն լեռներ խոստանալով։ Գուշակութիւն ընողները՝ իրենց սուտ գուշակութիւններովնին դիւրահաւատ մտաց սնապարծութիւնը եւ փառասիրութիւնը ձեռք կ' առնեն։ Բայց մարդկանց ամենամեծ պակասութիւնը՝ ապրելու համար ունեցած սէրն է, որն որ մենք մեր ճոռոմաբանութեամբը առաջնորդ կը բռնենք մեզ, եւ ինչպէս որ անոնք մեռնելէ վախնալնուն համար մեզի կը պատուեն, ուստի ասոր համար կը ջանան որ մեզի գոհ ընեն։ Ուրեմն անոնց տկարութեամբը ստացած այսչափ համարմունքնիս պահենք, եւ հիւանդներու քով ամենքնիս միաբան ըլլանք, որպէս զի կարենանք օգուտ քաղել, եւ մեր աբուեստին բոլոր սխալմունքները նորէն ընուութեան վրայ նետել։ Ժողովրդեան նախապաշարմունքները յիմարութեամբ ջնջենք կ' ըսեմ, որ այնչափ անձանց հացը կուտայ, եւ մեր թաղել տուած մարդոց ստակը ամեն կողմէն դեղեցիկ ժառանգութիւններ կը բերէ մեզ։

Պ. Թոմաս. Բոլոր այդ խօսքերուդ մէջ իրաւունք ունիս։ Բայց աս վէճերը արիւնին տաքութիւններէն յառաջ կուգան, որոնք շատ անգամ մեր ձեռքը չեն։

Պ. Ֆիշպրէն. Եկէք, պարոններ, բոլոր թշնամութիւններդ մէկդի թողուցէք եւ իրարու հետ հաշտուեցէք։

Պ. Տէֆոնանտրէս. Կը հաւանիմ։ Բայց աս անգամ աս հիւանդին

համար իմ ըսած որձացուցիչ դեղս թողանցնի, ուրիշանգամ թէ որ հիւանդ մը պատահի՝ ա մեն ուղածնուդ կը հաւանիմ։

Պ. Թոմաս. Ընտնկ թող ըլլայ։

Պ. Ֆիշպրին. Ուրեմն ձեռքերնիդ իրարու տուէք։ Մնաք բարև. ուրիշ անգամ աւելի խելացիութիւն բանեցուցէք։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Պրդ. Թոմաս, Տէֆոնանցրիս։ Լիզէթ։

Լիզէթ. Ի՞նչ, պարոններ տակաւին հոս էք, և չէք երթար բժշկութեան մէջ եղած սխալմունքները շիտակել։

Պ. Թոմաս. Ի՞նչ կայ։

Լիզէթ. Ընդգամին մէկը յանդգնութեամբ ձեր արուեստին ձեռք զարնելով՝ առանց ձեր հրամանին մարդ մը սպաններ է իր սուրը անոր փորը խօթելով։

Պ. Թոմաս. Այլ ի՛նչ կ՚ըսեմ. դուն մեղ ծաղր ընել կ՚ուզես. բայց օր մը ձեռքերնիս պիտի անցնիս։

Լիզէթ. Հշմարիտ կ՚ըսեմ՝ երբ ձեր օգնութեանը հարկաւորութիւն ունենամ, զինքս պիտի ըսպաննեմ։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Ռիչարդանցրոս՝ բիշոպի ղեկաւոր, Լիզէթ։

Ռիչարդանտրոս. Ի՞նչպէս եմ, Լիզէթ, աս հագուստը քեզի ի՞նչպէս կ՚երևի, կը կարծես որ այս զգեստով այն պարզամիտ մարդը կարենամ խաբել. այսպէս աղէկ է կ՚ըսես։

Լիզէթ. Աղէկ աղէկ ջըլլար, ուրեմ քեզի մինչև հիմա անհամբերութեամբ կը սպասէի։ Ստուգած ինծի այնպէս գթասիրտ բնութիւն մը տուեր է, որ չեմ կրնար երկու սիրահարներուն իրարու համար հառաչելը տեսնել, ասոր համար խիստ կը բաղձամ ձեր զգացած նեղութիւնը թեթևցընել։ Ի՛նչ կ՚ուզէ՝ ըլլայ, Լուկինդան իր հօրը բռնութենէն ազատելև ջու ձեռքդ յանձնել կ՚ուզեմ։ Տեսնելուս պէս՝ քեզի հաւնեցայ. ես մարդիկը կը ճանչնամ, և աղջիկը քեզմէ աւելի աղէկը չկրնար գտնել։ Սերը տարօրինակ վտանգներ յառաջ կը բերէ, բայց մենք այնպիսի հնարք մը մտածեցինք, որ գուցէ պիտի յաջողի։ Արդէն ամեն միջոցները կարգի դրած ենք. աղջկան հայրը վարպետ մարդ մը չէ. և եթէ այս դէպքիս մէջ յաջողինք, մեր նպատակին հասնելու ուրիշ հազար ճամբաներ կը գտնենք։ Դուն ինծի հոն սպասէ. ես կու գամ դքեղ ներս կը մտցընեմ։

(Ռիչարդանտրոս Բիսպրին ներսը կը մտնի)։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Սկանարէլ, Լիզէթ։

Լիզէթ. Պարոն, ուրախացիր։ ուրախացիր։

Սկանարէլ. Ի՞նչ կայ։

Լիզէթ. Ուրախացիր։

Սկանարէլ. Ի՞նչ բանի համար։

Լիզէթ. Ուրախացիր կ՚ըսեմ։

Սկանարէլ. Ի՞նչ ըլլալը ըսէ, որ ուրախանամ։

Լիզէթ. Ոչ, կ՚ուզեմ որ առաջ

ուրախանաս, երգես ու խաղաս։

Սկանարէլ. Ի՞նչ բանի վրայ։

Լիզէթ. Իմ ըսելու խօսքիս վրայ։

Սկանարէլ. Զարմանալի բան։ (Կ'երգէ ու կը խաղայ։) Լա լըրա լա լա, լա լըրա լա։ Ի՞նչ բան է սա։

Լիզէթ. Պարոն, աղջիկդ աղէկցած է։

Սկանարէլ. Աղջիկս աղէկցած է։

Լիզէթ. Այո՛, բժիշկ մը գտայ, այնպէս երևելի բժիշկ մը, որ հրաշալի բժշկութիւններ կ' ընէ, և միւս բժիշկները իր ծոցէն կը հանէ։

Սկանարէլ. Ո՞ւր է ատ բժիշկը։

Լիզէթ. Երթամ ներս բերեմ զան։

Սկանարէլ (Ա-անդին). Նայինք՝ ատ ուրիշներէն աւելի աղէկ գործ պիտի տեսնէ՞։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՔԼԻԴԱՆՏՐՈՍ՝ ԲԺՇԿԻ ՂԳԵԱՊ ՀԱԳԱԾ. ՍԿԱՆԱՐԷԼ, ԼԻԶԷԹ։

Լիզէթ (Քլէրանդրոսը ներս բերէ ը վ). Ահա բժիշկը ատ է, պարոն։

Սկանարէլ. Ատ ինչ բժիշկ է, ո՞ր ուն մօրուքը դեռ նոր կը բուսնի։

Լիզէթ. Գիտութիւնը մօրուքին հետ չչափուիր, և ասոր ճարտարութիւնը իր կզակին վրայ չէ։

Սկանարէլ. Պարոն, ըսեցի թէ զարմանալի դեղեր ունիս, որոնցմով շուտով կը բժշկես եղեր։

Քշիդանտրոս. Պարոն, իմ դեղերս, միւս բժիշկներուն դեղերէն տարբեր են։ Ընոնց դեղերն են՝ որձացու ցիչդեղ, արիւն առնելատալ, սրբադեղեր և գրեխներ. բայց ես՝ խօսքերով, ձայնով, գիրերով, բժժանօք և գիւթական մատանիներով կ' աղէկցընեմ։

Լիզէթ. Զբսի՞։

Սկանարէլ. Ա՛ս ի՞նչ Էրևելի մարդ է։

Լիզէթ. Պարոն, աղջիկդ աթոռի վրայ նստած ինքնիրենը կը ցնորէ, երթամ հոս բերեմ։

Սկանարէլ. Այո՛, գնա։

Քշիդանտրոս (Սկանարէլին երակը ը ն ելով). Աղջիկդ շատ հիւանդ է.

Սկանարէլ. Ընոր հիւանդ ըլլալը ասկէ կ' իմանաս։

Քշիդանտրոս. Այո՛, հօրը և աղջկան մէջը եղած համակրութենէն իմացայ։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՍԿԱՆԱՐԷԼ, ԼՈՒԿԻՆԴԱ, ՔԼԻԴԱՆՏՐՈՍ, ԼԻԶԷԹ։

Լիզէթ (Քլէրանդրոսին). Ահա, պարոն, ա՛ռ աթոռը ու քովը նստէ (Սկանարէլին.) Դուն հոս եկու ու անոնք երկուքը մինակ հոն ձգենք։

Սկանարէլ. Ա՛ս հոս կ' ուզեմ կենալ։

Լիզէթ. Կատակի՞ համար կ' ըսես. պէտք է որ ասկէ հեռանանք։ Բժիշկ մը հազար տեսակ հարցընելու բաներ ունի, որոնք չվայելեր որ ուրիշ մը լսէ։

(Սկանարէլ ի Լիւսիի հետ հեռանան)։

Քշիդանտրոս (կամաց մը Լ-ինդայի). Ձեռ գիտեր, տիկին, ինչպէս մեծ ուրախութիւն մը կը զգամ, և չեմ գիտեր՝ ինչպէս խօսակցութիւնս սկսիմ։ Քեզի հետ աչքերով խօսեցած ատենս՝ կը կարծէի թէ քեզի ըսելու հազար խօսք ունիմ, և հիմա որ ուզածիս պէս

քեզի հետ խօսելու համարձակութիւնը ունիմ, կարող չեմ բան մը ըսել. ինչու որ ունեցած մեծ ուրախութիւնս բոլոր իմ խօսքերս մոռցուց։

Լուկինդա. Այս ալ նոյն բանը կըրնամ ըսել, և քեզի պէս սիրտս այնպէս ուրախութենէ յափշտակուած է, որ չեմ կրնար քեզի հետ խօսիլ։

Քշիդանտրոս. Ո՛հ, տիկին, ինչպէս երջանիկ պիտի ըլլայի, թէ որ ճշմարիտ ըլլար որ իմ դգացածս դուն ալ կը զգաս, և եթէ կարենայի իմ սրտիս մէջ քու սիրտդ դատելու։ Բայց, տիկին, կրնա՞մ գրնել հաւատալ թէ այս յաջող հնարքը դուն հնարած ըլլաս, որուն օգնութեամբը քու ներկայութիւնդ կը վայելեմ։

Լուկինդա. Թէ որ չես հաւատար որ աս հնարքը ես դտած ըլլամ, գոնէ պէտք ես գիտնալ որ աս առաջարկութիւը մեծ ուրախութեամբ ընդունեցի։

Սկանարէլ (Լիչերին). Կարծեմ թէ շատ մօտէն կը խօսի բժիշկը։

Լիչէթ (Սկանարէլին). Այսան զի անոր դիմաց պատկերը և գծագրութիւնը կը քննէ։

Քշիդանտրոս (Լուկինդային). Սիրտդ մէջ հաստատ պիտի կենա՞ս, տիկին։

Լուկինդա. Բայց դուն ալ քու դիտաւորութեանդդ մէջ մնալո՞ւ ես։

Քշիդանտրոս. Ո՛հ, տիկին, մինչև ցմահ։ Քուկդ ըլլալէն ուրիշ բաղձանք մը չունիմ, և հիմա պիտի տեսնես թէ ինչպէս ըսածս գործքով պիտի կատարեմ։

Սկանարէլ (Քշիդանտրոսին). Ինչ ըսիր, հիւանդնիս աւելի ուրախ կ՚երևի։

Քշիդանտրոս. Ինչու որ դեղերուս մէկը անոր վրայ ներգործելու է։ Ինչպէս մարդուս միտքը մարմնոյն վրայ իշխողութիւն մը ունի, և շատ անգամ անորմէ հիւանդութիւններ յառաջ կու գան, իմ սովորութիւնս ան է որ մարմինը բժշկելէն առաջ կը նայիմ որ միտքը բժշկեմ։ Ուստի իր նայուածքը, դիմաց գծագրութիւնը, և իր երկու ձեռքերուն գիծերը դիտեցի, ու իմ երկնաձիր արհեստովս իմացայ որ անոր միտքը հիւանդ է, և բոլոր հիւանդութիւնը ուրիշ բանէ եկած չէ, բայց եթէ կարգուելու խռովելու երևակայութենէ և խանգարեալ բաղձանքէ մը։ Այս ինծի համար այս ամուսնանալու սէրէն անվայել և այլանդակ բան մը չեմ տեսներ։

Սկանարէլ (Ֆրանչին). Այս ինչ ճարտար մարդ է։

Քշիդանտրոս. Այս բանիս համար սոսկալի ատելութիւն մը ունիմ և պիտի ունենամ բոլոր կեանցս մէջ։

Սկանարէլ. (Ֆրանչին). Այս ինչ երևելի բժիշկ է։

Քշիդանտրոս. Բայց, որովհետև պէտք է հիւանդներուն երևակայութիւնը խաբել, և անոր վրայ մաքի պակասութիւն մը տեսնելով, որուն եթէ շուտով դարմանս մը չըլլայ՝ վտանգ կը հասնի, իր տարութիւնը թեթևցընելու համար՝ ըսի որ զինքը կնութեան ուղելու համար եկած եմ հոս։ Յանկարծ անոր դէմքը փոխու

ը ուրախութեամբ լցուեցան. եթէ կ'ուզես քանի մը օրուան համար զան խաբել, պիտի տեսնես որ հիւանդութենէն պիտի ազատենք զան։

Սկանարէլ. Այո՛, յօժարութեամբ կ'ուզեմ։

Քշիպանտրոս. Նաքը այս այլանդակ միտքէն աղէկցընելու համար ուրիշ դեղերու փորձը կ'ընենք։

Սկանարէլ. Այո՛, ամենէն աղէկ ճամբան ա՛ս է։ Աղ ջիկս, ահա՛ աս պարոնը քեզի հետ կարդուիլ կ'ուզէ, և ես ալ յօժարութեամբ անոր խնդիրքը ընդունեցի։

Լուկինդա. Ա՜խ, կարելի՞ է արդեօք։

Սկանարէլ. Այո՛։

Լուկինդա. Բայց ատոնդ կ'ըսես։

Սկանարէլ. Այո՛, այո՛։

Լուկինդա (Քլէոանդրոսին). Ի՞նչ կը բաղձա՞ս, պարոն, որ իմ ամուսինս ըլլաս։

Քշիպանտրոս. Այո՛, տիկին։

Լուկինդա. Հայրս ալ հաւանութիւն տուա՞ւ։

Սկանարէլ. Այո՛, աղջիկս։

Լուկինդա. Ա՜հ, ինչպէս երջանիկ պիտի ըլլամ, թէ որ ատոյգ ըլլար։

Քշիպանտրոս. Ամենևին աս բանիս վրայ մի՛ տարակուսիր, տիկին, երկար ժամանակէ 'ի վեր ես քեզի կը սիրեի և քեզի հետ կարդուիլ կ'ուզէի։ Ես միայն ա՛ս բանիս համար եկայ, և թէ որ կ'ուզես որ բացարձակ շիտակը խօսիմ, աս դդեսը միայն մէկ պատրուակ մը է. և ուրիշ բանի համար բժիշկ չեղայ, բայց միայն քովդ մօտենալու, և իմ բաղձացածս աւելի դիւրութիւն ընդունելու համար։

Լուկինդա. Կը ճանչնամ, ատ խօսքերը սիրոյ նշաններ են. վասն որոյ չափազանց երախտապարտ եմ քեզ։

Սկանարէլ (Ինդիրէն). Ո՛հ, աս ինչ խենդ աղջիկ է, ո՛հ, աս ինչ խենդ աղջիկ է, ո՛հ, աս ինչ խենդ աղջիկ է։

Լուկինդա. Ուրեմն, հայրս իմ, աս պարոնը ինծի հետ պիտի կարդե՞ս։

Սկանարէլ. Այո՛, ահա՛, ձեռքդ ինծի տուր. քուկդ ալ տուր, պարոն բժիշկ։

Քշիպանտրոս. Բայց, պարոն...

Սկանարէլ (Թալիոմբիեամբ ծիծաղելով). Ո՛չ, ո՛չ. աս բանս... անոր միտքը հանդարտեցընելու համար է։ Ձեռքդ միացուր. ահա՛ գործը լմնցաւ։

Քշիպանտրոս. Ընդունէ՛ իբրև իմ սիրոյս գրաւ, այս իմ տուած մատանիս։ (Կամաց մը Սկանարէլին. Ա՛ս դիւթեալ մատանի մը է, որ խելքի պակսութիւնները կ'աղէկցընէ։

Լուկինդա. Դաշնագիրն ալ ընենք, որպէս զի պակաս բան մը չմնայ։

Քշիպանտրոս. Ա՜խ, ես ալ կը բաղձամ, տիկին։ (Կամաց մը Սկանարէլին.) Երթամ դեղերս գրող մարդը վեր կանչեմ, և աղջկանդ հաւատացընեմ թէ ան իմ գրագիրս է։

Սկանարէլ. Շատ աղէկ։

Քշիպանտրոս. Ո՞ւր է. հետս բերած գրագիրս վեր խրկեցէք։

Լուկինդա. Ի՞նչ, հետդ գրագի՞ր մը բերիր։

Քէիդանտրոս. Այ՛, տիկին

Լուկինդա. Շատ ուրախ եմ։

Սկանարէլ. Ո՛հ, աս ի՞նչ խենդ աղջիկ է, աս ի՞նչ խենդ աղջիկ է։

ՏԵՍԱՐԱՆ Է.

Գրագիր մը, Քէիդանտրոս, Սկանարէլ, Լուկինդա, Լիզէթ։

(Քէիդանտրոս ինքզինքը մը գրագրին նէ ի՞օսի)։

Սկանարէլ (Գրագրին). Այ՛, պարոն, պէտք է աս երկու անձանց համար պայմանագիր մը ընել։ Գրի՛ր. (Լուկինդային.) Ահա պայմանագիրը կ՚ըլլայ։ (Գրագրին.) Աղջիկանը քսանհազար ոսկի օժիտ կուտամ. գրէ՛։

Լուկինդա. Շատ շնորհակալ եմ, հայր։

Գրագիրը. Լմնցաւ. միայն ստորագրութիւնը մնաց։

Սկանարէլ. Ահա պայմանագիրն ինչ շուտով լմնցաւ։

Քէնդանտրոս (Սկանարէլին). Բայց, ընոնէ, պարոն...

Սկանարէլ. Լո՛հ, ո՛չ կ՚ըսեմ։ Մի՛թէ մենք չենք գիտեր ըրածնիս... (Գրագրին.) Տո՛ւր գրիչը ստորագրէ։ (Լուկինդային.) Ստորագրէ՛, ստորագրէ՛, ստորագրէ՛ նայինք։ Բայց չէ՞ ես պիտի ստորագրեմ։

Լուկինդա. Ո՛չ, ո՛չ. կ՚ուզեմ որ պայմանագիրը իմ ձեռքս ըլլայ։

Սկանարէլ. Շա՛տ աղէկ, առ։ (Պորտրագրելէն եկոր.) Հիմա գոհ ես։

Լուկինդա. Այ՛, այնչափ գոհեմ որ չէք կրնար երևակայել։

Սկանարէլ. Մեն բան լմնցաւ։

Քէիդանտրոս. Ոչ միայն գրագիրը մը հետս բերելու առաջուց մը տաճեցի, այլև երգեցիկները, նուագահարները և պար խաղացողները բերի տօնախմբութիւնը կատարելու և ուրախանալու համար։ Թողերթան ան մարդիկը հոս կանչեն։ Այս մարդիկները ես միշտ հետս կը տանիմ, որոնց ներդաշնակութեամբը և խաղերովը ամեն մտաց խռովութիւնները կը հանդարտեցնեմ։

(Խաղերուն, ծիծաղելիներուն ուրախութեանց ժամանակը Քէիդանտրոս Լուկինդան ի՛ առնէ և նը փաթաթի)։

ՏԵՍԱՐԱՆ Ը.

Սկանարէլ, Լիզէթ, Երգիչներ, Կաքսիոդներ, Երգեցիկներ։

Սկանարէլ. Այս ի՞նչ կերպ ծիծաղելի բժշկութիւն է։ Ո՞ւր են հիմա իմ աղջիկս և բժիշկը.

Լիզէթ. Ամուսնութիւնը կատարելու գացին։

Սկանարէլ. Ի՞նչպէս, ամուսնութիւն։

Լիզէթ. Ճշմարիտ կ՚ըսեմ, պարոն, կոցարը իր վանդակէն փախաւ. կատակ մը ընել կարծեցիր, բայց ճշմարտութեամբ կատարուեցաւ։

Սկանարէլ. Ի՞նչ կ՚ըսես։ (Քէիդանտրոսին և Լուկինդային եկեր երեսը կ՚ուլէ, բայց պար խաղացողները կը բռնեն զան) Թողուցէք որ երթամ, թողուցէք կ՚ըսեմ։ (Կոչտոռները դէպ կը բռնեն զան.) Կաղաչեմ՝ թողուցէք զիս։ (Սկանարէլը բռնի խաղ չընելով կ՚ուլէ.) Կրողը տանի աս մարդիկները։

ՎԵՐՋ ՍԵՐԸ ԲԺԻՇԿ ԷՒՆ

2288